պատարագի ելի արտաքս քան զդուռն սենեկին, և նոքա տեսեալ թէ ես ելանեմ արտաքս թէպէտ ոչ գիտեն թէ զինչ է, սակայն սկսան գալ զկնի իմ ուր և երթայի, և իջի ի վայր ի գաւիթ տանն և սանդուղքն տանն ընդ որ իջանէաք խլխլեալ ամենեին, իսկ ի շարժմանն այնմիկ մի աստիճանացն յայսկոյս և մին յայնկոյս տարուբերեալ ծփէին իբրև ի մէջ մրրկեալ ալեաց ծովու. և առ ստորոտովն վէմ մի մեծ որձաքար թաւալեցուցեալ կայր, և որ անկեալ ընդ սանդուխսն հարցի ընդ վէմն ընդ այն չիք փրկութիւն. սակայն աստուծով ես առաջի և նոքա զկնի իջաք անվնաս ամենեքին ի գաւիթն. սակայն հայեցայ և ի գաւիթն զի էր արարեալ յամենայն կողմանց ի քարակոյտ որմոց, որոյ քարինքն իբրև զտերևս ծառոց թօթափէին, և չէր ուրեք տեղի փախստեան, ապա աճապարեցի և ելի արտաքս նաև ի գաւթէ անտի ի յընդարձակ տեղի մի, և եդեալ եմ ի մտի կալ ի միջոցին, զի թէպէտ նաև անդ այնպիսի քարակոյտ որմունք կան յամենայն կողմանց, սակայն հեռի են ի միջոցէ անտի, այլ յերթալն մինչև անդ մասամբ իմն ի կոխելոյս ի վերայ քղանցից հանդերձիս, և մասամբ իմն ի շարժմանէ երկրին սայթաքեալ անկայ, և թէպէտ հարի զքարի և սկաւ մի վիրաւորեցայ, սակայն անվնաս, և իբրև անկայ ես անկան նաև նոքա որք էին ընդ իս, այլ յարուցեալ գնացի կացի ի միջոցի անդ, և նոքա որք գային ընդ իս եկին և կացին առ իս. և յետ այսր ամենայնի տակաւին ոչ դադարեցաւ նոյն միանգամ սկսեալ շարժումն անընդհատ, և հայեցեալ տեսանէաք, զի կործանէին ամենայն որմունք շուրջանակի, և տուն յորում էաք ծածկեցաւ ի փոշւոյ կործանմանցն։ Կայր առաջի մեր վէմ մի մեծ, զոր ասեն պինէկ թաշը, և այն ահագին վէմն թզաւ չափ ոստուցեալ բարձրանայր յերկրէ և իջանէր։ Կործանեցաւ սենեակն յորում պատարագէի. կործանեցան և այլ բազում կողմանք տանն. սակայն շնորհօքն աստուծոյ ոչ ոք մեռաւ ի մէջ, բայց միայն փոքրիկ մանուկ մի յարութիւն աղային երեք ամաց ստեփան անուն, զոր ոչ էին զարթուցեալ ի քնոյն և մնացեալ էր ի սենեկի անդ յորում ննջէին նոքա ամենեքին ի միասին։...

Ցամի տեառն 1766
Յունիսի 7
[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Անանիա վրդպ.

ՄԿԲ.

Գ.

Գերաւեծար Գերյարգելի Աբբայ Հօր մերոյ և բարեւնապետի տեառն տեառն Յովհաննու Վարդապետի, ողջոյն

Թղթ. 22.

Ի մայիսի Լ, գրեցի համառօտիւ. բայց այժմ վերստին գրեցից զերկրաշարժութենէ քաղաքիս. քանզի ի մայսի 22 յերեքշաբթի, ի տասներորդ ժամուն, իբր զկնի կիսոյ ժամուն զկնի ծագման արևուն, եղև գետնաշարժութիւն մեծ։ Բայց յառաջ քան զայս երկրաշարժութիւնս, բազում աւուրք յառաջ, եղանակն և օդն էր յոյժ այլանդակ և անյարմար. քանզի օդն էր անմաքուր և ծանր. գաղջ և ջերմ իբր աւուրք օգոստոսի, մինչև մեզ երկնչիլ թէ այս եղանակ գուշակէ զգետնաշարժութիւն. բայց ոչ գուշակէաք զայսպիսի մեծն, որ տեսաց առնուազն երեք լոպէք. և սկսաւ այսպէս։

Յառաջ քան զշարժն ծովն գնաց յետս յետս յափն կուսէն ի ըստամպոլ։ Իսկ ի կղզիս, ասեն ականատեսքն, թէ իբր 100 կանգուն յետս յետս գնաց ծովն. մինչև ձկանց մնալ ի վերայ հողոյ. և ապա դարձաւ անդրէն ծովն առ ափն կոյս, և բարձրացաւ աւելի քան զյառաջն։ Արդ ծովն ի դառնալն, դարձաւ որոտմամբ երկրիս, և ընդ նմա եղև գետնաշարժն եկեալ յարևմտից, որ ցնցեաց ուժգին և ընդ երկար. և զկնի բազում անգամ